



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԷ ԷՆՍԻՆՈՅԻ Ս. ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՏԻՐԱՍԱՅՐ ՄԱՐԻ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻ ՔԱՌԱՍՈՒՆՔԻՆ ԱՌԻԹՈՎ

Կիրակի, 17 Մայիսին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետե էնսինոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ Ս. Պատարագին:

Յաւարտ Ս. Պատարագի, տեղի պիտի ունենայ հոգեհանգստեան արարողութիւն հանգուցեալ Տիրամայր Մարի Մարտիրոսեանի մահուան քառասունքին առիթով. արարողութեան պիտի նախագահէ Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապագեան:

PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT HOLY MARTYRS CHURCH

40TH DAY REQUIEM FOR DIRAMAYR MARIE MARDIROSSIAN

On Sunday, May 17th, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy at Holy Martyrs Church in Encino.

Following the Liturgy, 40th day requiem service will be conducted for Diramayr Marie Mardirossian. H.E. Archbishop Yeprem Tabakian will preside over the requiem.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՆԵՐԿԱՅ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ՀԱՅ ՇՐՋԱՆԱԲԱՐՏՆԵՐՈՒ Ի ՊԱՏԻ CASPSԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ

Հանրային Վարժարաններու հայ աշակերտներու դպրոցական կեանքին հետեւող Ազգ. Առաջնորդարանի CASPS յանձնախումբը, յառաջիկայ շաբաթներուն, կազմակերպած է հանդիսութիւններ նուիրուած՝ Կլենտոյի հանրային վարժարաններէ շրջանաւարտ յաջողակ

աշակերտներուն համար, որ տեղի պիտի ունենայ Երեքշաբթի, 26 Մայիսի յետմիջօրէին, ժամը 5:30ին, Glenoaks-ի «Անուշ» ճաշարանին մէջ, Կլենտէյլ:

Առաջնորդ Սրբազան Զայրը ներկայ պիտի ըլլայ հանդիսութեան եւ շրջանաւարտներուն պիտի փոխանցէ իր օրհնութեան խօսքը:

Իսկ Լոս Անճելըսի հանրային վարժարաններու համակարգի երկրորդ տեղամասի շրջանաւարտներուն համար, որ տեղի պիտի ունենայ Չորեքշաբթի, 3 Յունիսի յետմիջօրէին, ժամը 5:30ին, Լոս Անճելըս Վէլի Գոլէճի սրահին մէջ:

PRELATE TO ATTEND CASPS RECEPTION HONORING OUTSTANDING ARMENIAN GRADUATES

The Committee for Armenian Students in Public Schools (CASPS), which serves under the auspices of the Prelacy, has organized a reception to honor outstanding Armenian students graduating from the Glendale Unified School District. The 13th annual reception will take place on the evening of Tuesday, May 26th, at Anoush Restaurant in Glendale.

The Prelate will attend and convey his blessings to the students.

A reception for graduating students from the Los Angeles Unified School District will take place on June 3rd, at Valley College.

ՀԱՄԱՐՁՄԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ԱՒԱՆԴԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ

Մեր ազգային ու եկեղեցական ուրախառիթ տօներէն մէկն է Զրիստոսի համբարձման տօնը:



Համաձայն Արեւմտեան մեր Թեմի աւանդութեանց, եւ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի տնօրինութեամբ ու

հանդիսապետութեամբ, Հինգշաբթի, 21 Մայիսի առաւօտուն, Ս. Պատարագ տեղի ունեցաւ Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ: Պատարագիչն էր Օրէնճ Քաունթիի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Զրանդ Քիւյ. Երեցեան, որ

այս առիթով իր քարոզին ընթացքին, անդրադարձաւ Համբարձման տօնի խորհուրդին եւ քրիստոնէայ հաւատացեալի կեանքին մէջ անոր պատգամի արժէքին:

Ս. Պատարագին ներկայ էին Հայաստանի գլխաւոր հիւպատոս Տիար Գրիգոր Յովհաննիսեան եւ իր ազնիւ Տիկինը՝ Վիքթորիա, հոգեւորականաց դասու անդամներ եւ մեծ թիւով հաւատացեալներ:

Ս. Պատարագի ետք, Կլենտէյլի First Congregational Church-ի սրահին մէջ տեղի ունեցաւ Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինի կազմակերպած աւանդական ու տոհմիկ ճաշկերոյթը:

Առաջնորդ Սրբազանին կողքին, ճաշկերոյթին ներկայ եղան Տ. Հրանդ Զինյ. Երեցեան, Տ. Կոմիտաս Զինյ. Թորոսեան, ազգային բարերարներ, եւ շուրջ 250 մասնակիցներ:



Հանդիսավարն էր Տ. Օ. Մարմինի անդամներէն Տիկին Հուրիկ Ապտուլեան: Ան առաջին հերթին հրաւիրեց Առաջնորդ Սրբազանը, որպէսզի կատարէ սեղաններուն օրհնութիւնը: Առաջնորդ Սրբազանը ապա ողջունեց մասնակիցները, գնահատանքով արտայայտուեցաւ Տիկնանց Օժանդակ Մարմինի ժրաջան անդամներուն մասին ու բարձր

գնահատեց Տիկնայք Գոհար ու Բեկի Սիւլահեանները, որոնք սիրայօժար յանձն առած էին օրուան հիւրընկալումը:

Արժ. Տ. Հրանդ Զինյ. Երեցեան Համբարձման տօնին յատուկ խօսքը ու անոր կապուած աւանդութիւնները ներկայայացուց, վեր առնելով այն իրողութիւնը, թէ ասիկա եկեղեցական ու ազգային տօն է, որովհետեւ մեր ժողովուրդը գեղեցիկ եւ զուարթ աւանդութիւններով կապուած է Համբարձման տօնին. ան խօսեցաւ տոհմիկ արարողութիւններուն, վիճակաձգութեան աւանդութեան եւ մեր ժողովուրդի կեանքին մէջ անոնց դերին մասին:

Կիրարկուեցաւ գեղարուեստական կոկիկ յայտագիր մը, որուն մասնակցութիւն բերաւ երիտասարդ երգիչ Գագիկ Պատալեան: Չուարթ մթնոլորտը աւելի եւս շէնցաւ աւանդական վիճակաձգութեամբ եւ «Ձան Կիւլիւմ»:ի արարողութեամբ: Տիկնանց Օժանդակ Մարմինը այս առիթով պատրաստած էր երգարան-տետրակ մը, որ կը բովանդակէր համբարձման ու հայրենասիրական երգեր. ներկաները մթնոլորտը պայծառացուցին խանդավառ երգերով եւ կատարուեցան նուիրատուութիւններ:

THE FEAST OF ASCENSION CELEBRATED WITH DIVINE LITURGY AND TRADITIONAL LUNCHEON

On Thursday, May 21st, 2009, the Feast of the Ascension of our Lord Jesus Christ was celebrated within the Prelacy with Divine Liturgy followed by

the traditional luncheon. H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, presided over Divine Liturgy, which was celebrated at St. Mary's Church in Glendale by Rev. Fr. Hrant Yerestian. Rev. Fr. also delivered the sermon, in which he spoke of the meaning of the Ascension in our individual lives.

Participating in the services were clergy members, the Consul General of Armenia the Honorable Grigor Hovhannisyian and his wife Victoria, and faithful.

The traditional luncheon, which is organized each year by the Prelacy Ladies Auxiliary, followed at First Congregational Church in Glendale, with the participation of the Prelate, Rev. Fr. Hrant Yeretian, Rev. Fr. Gomidas Torossian, and over 250 sponsors and friends.

Master of Ceremonies and Ladies Auxiliary member Mrs. Hourig Abdulian welcomed the guests then invited the Prelate to deliver the invocation. The Prelate welcomed the guests and commended the Ladies Auxiliary members for their contributions. The Prelate also thanked and commended Mrs. Kohar and Mrs. Peggy Sulahian for hosting the luncheon.

Rev. Fr. Hrant spoke about the religious and national traditions associated with the Feast of the Ascension and their significance in our lives today.

Guests also enjoyed a performance by singer Gagik Badalyan, participated in the traditional casting of lots and the singing of songs with the help of a song book compiled for this occasion by the Ladies Auxiliary. Throughout the event, donations were also made by the guests on this joyous occasion.

ԱԶԳ. Վ. ԵՒ Ա. ՇԱՄԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՄԱՐՏԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ ՍՏԱՅԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆ ՀՕՐ ԶԵՌԱՄԲ

Ազգային Վահան եւ Անուշ Շամլեան միջնակարգ վարժարանի աւարտական կարգի աշակերտները Չորեքշաբթի, 20 Մայիսի առաւօտուն, Համբարձման տօնի նախօրեակին, իրենց դաստիարակներուն եւ ծնողածանդակ մարմինի անդամներու ընկերակցութեամբ այցելեցին Ազգ. Առաջնորդարան եւ ընդունուեցան Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի կողմէ: Ներկայ էր նաեւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն Արժ. Տ. Վազգէն Քիւյ. Աթմաճեան: Աշակերտները Ազգ. Առաջնորդարան եկած էին Ս. Հաղորդութիւն ստանալու եւ Առաջնորդ Սրբազանին հետ մտերմիկ պահ մը ունենալու համար: Անոնք քանի մը շաբաթ ետք պիտի ունենան իրենց ամապերջի հանդէսը, շրջանաւարտ ըլլալով վարժարանէն:

Վարժարանի տնօրէնութիւնը յաջորդաբար երկրորդ տարին ըլլալով է որ նման նախաձեռնութեան կը դիմէ, ինչ որ այս այցելութիւնը կը վերածէ գեղեցիկ աւանդութեան մը:

Աշակերտներն ու դաստիարակները առաջին հերթին համախմբուեցան «Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն» մատրան մէջ, ուր միասնաբար արտասանեցին Տէրունական Աղօթքը, ապա Չղջումը արտասանեցին Տէր Զօր հետ, Առաջնորդ Սրբազանէն թողութիւն ստանալով իրենց մեղքերուն համար:



Նախաճաշի պահէն ու խմբովին լուսանկարուելէ ետք, աշակերտները ուղղուեցան «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահը: Վարժարանի փոխ տնօրէնուհին՝ Տիկին Ռիթա Գաբրիէլեան, շնորհակալութեան խօսք ուղղեց այս ընդունելութեան համար եւ անելցուց, որ ամերտական կարգի աշակերտները յուշանուէր մը

բերած են Առաջնորդ Սրբազանին: Յուշանուէրը՝ Հայաստանի Ծաղկածոր շրջանի պատմական Կեջարիս վանքին պատկերն էր: Ապա, աշակերտներ արտասանութեամբ ու նուագով այլ անակնկալներ հրամցուցին:

Առաջնորդ Սրբազանը գնահատանքի արտայայտութիւններով ողջունեց աշակերտներն ու դաստիարակները: Ան անդրադարձաւ այն իրողութեան, որ շրջանաւարտ կարգի աշակերտներու Ազգ. Առաջնորդարան այցելութիւնը տեղի կ'ունենայ անոնց Հայաստան այցելութենէն ետք, երբ հայրենի հողին, ջուրին ու օդին սնունդով տոգորուած՝ անոնք անելի եւս հայացած են, իբրեւ լրում՝ վարժարանի յարկին տակ իրենց ստացած ուսման ու հայեցի դաստիարակութեան: Առաջնորդ Սրբազանը յորդորեց աշակերտները, որ այս ոգին ու մեր ժողովուրդին հետ կապը ամուր պահեն յառաջիկայ տարիներուն, ո՛ր որ ալ ըլլան, ի՛նչ միաջաժայրի մէջ ալ որ գտնուին ու ի՛նչ ասպարեզ ալ որ որդեգրեն: Վերջապէս, ան ողջոյնի խօսք ուղղեց վարժարանի Տնօրէնին՝ Տիարը Վազգէն Մատենլեանի ու անձնակազմին, գնահատելով հաստատուած այս ամանդութիւնը:

Հանդիպումը վերջ գտաւ «Մեր Հայրենիք» քայլերգին խմբերգումով:

CHAMLIAN SCHOOL GRADUATING CLASS RECEIVES HOLY COMMUNION AT THE PRELACY CHAPEL

On the morning of Wednesday, May 20th, 2009, and the eve of the Feast of the Ascension of our Lord Jesus Christ, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy the graduating class of Vahan and Anoush Chamlian School. The students were accompanied by their teachers and Parent Teacher Committee members. Pastor of St. Mary's Church Rev. Fr. Vazken Atmajian was also in attendance.

It has become a tradition for the graduating class to come to the Prelacy and receive Holy Communion by the Prelate prior to their graduation.



Upon their arrival, the students and teachers gathered at the St. Dertad and St. Ashkhen Chapel where they recited the Lord's Prayer then received Holy Communion.

After breakfast, the students and teachers headed to the "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall. Vice-Principal Mrs. Rita Kaprielian thanked the Prelate for the warm reception and announced that the students had a memento to present, a framed portrait of the Kecharis Monastery of Vanadzor. The students then presented an artistic program consisting of songs and poetry.

After breakfast, the students and teachers headed to the "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall. Vice-Principal Mrs. Rita Kaprielian thanked the

In his address to the students, the Prelate urged them to keep the Armenian spirit alive and strong in them wherever they may find themselves in the coming years.

The gathering came to a close with the singing of the Armenian national anthem.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԿԱՏԱՐԵՑ ԴԱԻԹԵԱՆ-ՄԱՐԻԱՄԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԳՐԱՍԵՆԵԱԿԻՆ ԲԱՅՈՒՄԸ

Երկուշաբթի, 18 Մայիսի երեկոյեան, Թեմիս բարեխնամ Առաջնորդ



Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան կատարեց Դալթեան-Մարիամեան Կրթական Հաստատութեան նոր գրասենեակին բացումը, ընկերակցութեամբ հաստատութեան պատասխանատուներու եւ Կլենտէյլ քաղաքի կրթական համակարգի ներկայացուցիչներու:

Ծանօթ է, որ Դալթեան-Մարիամեան Կրթ. Հաստատութիւնը աւելի քան 20 տարիէ ի վեր երախտաշատ աշխատանք կը տանի, Կլենտէյլի, Պըրպէնքի, Նորթ Յոլիվուտի եւ Լոս Անճելըսի շրջանի հայաշատ այլ քաղաքներու պետական վարժարաններ յաճախող հայ աշակերտներու

համար հայերեն լեզուի ու մշակոյթի դասընթացքներ կազմակերպելով: Առ ի գնահատանք սերնդակերտ գործին, Կլենտէյլի կրթական համակարգի վարչութիւնը Դաւթեան-Մարիամեան Կրթ. Հաստատութեան ընդարձակ բաժին մը յատկացուցած է Էտիսըն վարժարանի նախկին շէնքին մէջ, որ վերանորոգուած ու սարքաւորուած է:

Բացման հանդիսութեան, Առաջնորդ Սրբազանին կողքին էին Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապազեան եւ Արժ. Տ. Կոմիտաս Քհնյ. Թորոսեան: Ժապաւենի հատումի արարողութենէն ետք, տեղի ունեցաւ պատշաճ հիւրասիրութիւն, ապա, սրահին մէջ կիրարկուեցաւ պաշտօնական յայտագիր մը: Խօսք առաւ Առաջնորդ Սրբազանը եւ գնահատանքով արտայայտուեցաւ Դաւթեան-Մարիամեան Կրթ. Հաստատութեան ծառայական աշխատանքին մասին, բարձր գնահատեց հայ մանուկն ու պատանին մեր մշակոյթին կամրջող դաստիարակներու անձնդիր աշխատանքը եւ դրուատեց Ազգ. Առաջնորդարանին հետ Հաստատութեան գործակցութեան ոգին:

Խօսք առին ու գնահատականներ արձանագրեցին նաեւ Կլենտէյլի կրթական համակարգի պատասխանատուներ եւ այլ ներկայացուցիչներ: Հաստատութեան ներկայացուցիչները շնորհակալութիւն ու երախտագիտութիւն արտայայտեցին Առաջնորդ Սրբազանին ու Կլենտէյլի կրթական համակարգի պատասխանատուներուն: Աշակերտներ գեղարուեստական յայտագիրին մասնակցութիւն բերին երգով ու արտասանութեամբ:

PRELATE PRESIDES OVER OPENING CEREMONY OF NEW DAVIDIAN & MARIAMIAN EDUCATIONAL FOUNDATION CENTER

On the evening of Monday, May 18th, 2009, H.E. Archbishop Moushegh



Mardirossian, Prelate, presided over the opening of the new center of Davidian and Mariamian Educational Foundation (DMEF) at the Pacific Education Center in Glendale. Participating in the ceremony were DMEF Board members and Glendale Unified School District board members. Accompanying the Prelate were H.E. Archbishop Yeprem Tabakian and Rev. Fr. Gomidas Torossian.

Following the ribbon cutting ceremony, a reception followed, after which guests gathered in the auditorium for the official portion of the program. In his remarks, the Prelate highly commended the efforts of the board members over the past 20 years in providing a quality Armenian education to our youth and bridging them to our heritage and culture, and reaffirmed the collaboration that continued between the Prelacy and the foundation.

Remarks were also delivered by Glendale Unified School District members and representatives and by Davidian and Mariamian Educational Foundation board members who thanked both the Prelate and School District members for their support.

ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ ԱԶԳ. ԵՐԵՍՓՈՒԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄԲ ԱՄԱՐՏԵՑ ԻՐ 37ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմի Ազգ. Երեսփոխանական Ժողովը անցեալ շաբաթավերջին՝ Ուրբաթ 15 եւ Շաբաթ 16 Մայիսին գումարեց իր 37րդ ընթացիկ նստաշրջանը ու յաջողութեամբ եզրափակեց իր աշխատանքները:



Ժողովը տեղի ունեցաւ Ազգային Առաջնորդարանի յարկին տակ, «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ, նախագահութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեանի, մասնակցութեամբ Զոգեւորականաց Դասու անդամներու, Ազգ.

Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչներուն, Երեսփոխանական Ժողովի անդամներու մեծամասնութեան, Թեմիս Ժողովականութեան անդամներու, ծխական շրջաններու հոգաբարձութեանց ատենապետներու, Ազգ. Վարժարաններու Խնամակալ Մարմինի ներկայացուցիչներու եւ վարժարաններու տնօրէններու ու վարիչներու: Ժողովին հիւրընկալն էր Սան Ֆրանսիսքոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգաբարձութիւնը:

Չորս նիստերու վրայ տարածուած ժողովը քննարկեց Առաջնորդ Սրբազանին, Կրօնական Ժողովին ու Ազգային Վարչութեան միամեայ գործունեութիւնը եւ «յոյժ գովելի» գնահատականը արձանագրեց անոր մասին: Քննարկուեցան մեր եկեղեցին ու կրթական կեանքը յուզող հարցեր, յատուկ կարեւորութեամբ վեր առնուեցաւ նոր սերունդի ու երիտասարդութեան հոգեմտաւոր հոգածութեան հարցը, մանաւանդ որ Ս. Աթոռոյս Գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս 2009 տարին հռչակած Է Երիտասարդութեան Տարի: Երեսփոխանական Ժողովի անդամներն ու Ժողովականներ, իրենց առաջարկներով ու թելադրանքներով, կազմեցին յառաջիկայ տարուան աշխատանքի ուրուագիծը: (Ժողովի մանրամասնութիւնները տեսնել Ազգ. Առաջնորդարանի կայքէջի լրատուութեան բաժինին մէջ):

37TH PRELACY REPRESENTATIVES ASSEMBLY CONCLUDES

On the afternoon of Saturday, May 16th, 2009, the 37th Prelacy Representatives Assembly concluded. H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, presided over the two-day assembly which had convened at the "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall with the participation of clergy members, Central Executive Council members, Executive Council members, delegates, Boards of Trustees Chairmen, Board of Regents members, and Prelacy Schools' principals and directors. The Assembly was hosted by St. Gregory Church of San Francisco.



During the four sessions, the Assembly discussed and analyzed the undertakings of the Prelate and Religious and Executive Councils over the previous term, which they found "highly commendable". In addition, issues concerning our parishes and schools were discussed with the focus on the intellectual and spiritual development of

youth, especially considering that this year has been designated the Year of the Youth by His Holiness Catholicos Aram I. In conclusion, delegates offered their suggestions and proposals for the coming term.

Please visit the news section of our website (www.westernprelacy.org) for the detailed press release and photos.
